

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012թ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Հայկաշեն համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և հյուրեր: Գործող կարգի և Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Ձեր քննարկմանն են ներկայացնում ըստ բնագավառների գյուղապետարանի, համայնքի ղեկավարի և ավագանու 2012թվականի տարեկան գործունեությունը:

2012թ-ի ընթացքում համայնքի ղեկավարը հրավիրել և վարել է ավագանու 6 նիստ: Նիստերի ընթացքում լսվել են տարբեր հարցեր և ընդունվել է ավագանու համապատասխան որոշումներ: Ավագանու որոշումները յոթ օրյա ժամկետում ուղարկվել է մարզպետարան:

Հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը : Ընդունվել են համայնքի ղեկավարի 17 որոշումներ և արձակվել են 20 կարգադրություններ:

Այժմ մեր գործունեությունը ներկայացնենք ըստ բնագավառների`.

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների պաշտպանության բնագավառում`

Համայնքի ղեկավարը իր իրավասությունների շրջանակներում պաշտպանել է համայնքի բնակիչների շահերը , կազմակերպել է համայնքի բնակչության հաշվառում . այն է`

Մշտական բնակչություն 1504 մարդ. որից`

1. Թոշակառու – 147
2. Նպաստառու ընտանիքներ – 16
3. Ջոհված ազատամարտիկ – 1 ընտանիք
4. Հաշմանդամ – 15
5. Միակողմանի ծնողազուրկ – 6 ընտանիք
6. Երկողմանի ծնողազուրկ -- 1 ընտանիք
7. Բազմազավակ – 12 ընտանիք
8. Փախստական - 1 ընտանիք

Կատարվել են 250 քաղաքացիների ընդունելություններ, քննության է առնվել նրանց առաջարկությունները , քննարկվել են քաղաքացիների կողմից ներկայացրած 6 դիմում - բողոքները և ձեռնարկվել համապատասխան միջոցներ : Բնակչությանը տրամադրվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և 226 տեղեկանք:

2. Ֆինանսների բնագավառում իրականացվել է`

Կազմվել և ավագանու հաստատման է ներկայացվել 2012թ. համայնքի բյուջեի նախագիծը , բյուջեում առաջարկվող փոփոխությունները :

Սահմանվել են տեղեկան տուրքերի և վճարների դրույքաչափերը և ներկայացվել ավագանու հաստատմանը : Կազմակերպվել է հողի հարկի , գույքահարկի և տեղական տուրքերի գանձման աշխատանքները : Հարկերը չվճարող անձանց նկատմամբ կիրառվել են համապատասխան միջոցներ :

2012թ-ի բյուջեն կատարվել է 100 % - ով:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում`

Համագործակցել ենք Ոստիկանության թաղային լիազորի հետ , նրան տրամադրել անհրաժեշտ նյութեր : Բնակչության կողմից հասարակական կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել :

Ոստիկանության կողմից համայնքում և համայնքի բնակիչների կողմից իրականացված իրավախախտումների վերաբերյալ տվյալներ համայնքի ղեկավարին չի տրամադրվել :

4. Պաշտպանության բնագավառում`

Կազմակերպվել է գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքը : Երիտասարդների հետ տեղի են ունեցել հանդիպումներ , որոնց ընթացքում նրանց հետ տարվել է ռազմահայրենասիրական դաստիարակչական աշխատանքներ : Ջորակոչային տարիքի երիտասարդները ժամանակին են ներկայացել տարածքային զինկոմիսարիատ : Նրանց անձնական գործերը կազմվել և ժամանակին ներկայացվել է զինկոմիսարիատ :

Սոցիալապես անապահով զինծառայողների ընտանիքներին ցույց է տրվել օժանդակություն և աջակցություն : Ոմանց տրամադրվել են փաստաթղթեր ներկայացնելու ՀՀ Պաշտպանության նախարարություն` իրենց բնակարանային խնդիրները լուծելու համար:

Մայիսի 9-ին մեծ հանդիսավորությամբ Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հուշարձանի տարածքում կազմակերպվել է միջոցառում , որտեղ համայնքի շուրջ 80% մասնակից քաղաքացիներից շատ-շատերը իրենց երախտիքի խոսքերն արտահայտեցին Շուշիի ազատագրմանը մասնակցած Հայկաշեցի

ագատամարտիկների, Արցախյան պատերազմում զոհված Գազիկ Կիրակոսյանի և Մեծ հայրենականում զոհվածների կատարած սխրագործությունների մասին:

5. Քաղաքաշինության բնագավառում`

Որոշ քաղաքացիների տրվել է շինարարական թույլտվություն , արգելվել է ապօրինի շինարարությունը : Կատարվել են փողոցների կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ: Գյուղի կենտրոնական փողոցները լուսավորվել են: Կանոնավոր կերպով կատարվում է աղբահանություն` շաբաթը մեկ պարբերականությամբ: Մեծ ուշադրություն է դարձվել համայնքի սանիտարահիգիենիկ պայմանների վրա :

6. Հողօգտագործման բնագավառում`

Կատարել ենք համայնքի վարչական տարածքի հողերի հաշվառումը և կազմել հողային հաշվեկշիռը` այն է

Համայնքի վարչական տարածքը - 1036.14 հա

որից`

1. Վարելահողեր – 497.84 հա

2.Տնամերձ հողեր – 108.23 հա

Պետական սեփականության հողեր 345.98 հա

որից`

1. Աճուրդային կարգով օտարված հողեր – 143.26 հա

2.Համայնքային սեփականության հողեր – 147.51 հա

3. Պետական սեփականության հողեր – 55.21 հա

Համայնքում ապօրինի հողօգտագործողներ չկան : Վարելահողերի փակ դրենաժային համակարգի խցանման պատճառով հողամասերի բարելավման աշխատանքները չեն իրականացվում, տեղի է ունենում հողերի երկրորդային աղակալում , ընկել է հողերի բերրիությունը: Այս առընչությամբ գրություն է ուղարկվել Արմավիրի մարզպետարան, և ակնկալում ենք մարզպետ պ/ն Ա . Ղահրամանյանի աջակցությունը ` համայնքի շուրջ 130 հա 4-րդ կարգի վարելահողերի գնահտման խումբը փոխելու 5-րդ կարգի : Այս առումով Հայկազենի գյուղապետարանը համագործակցել և աջակցություն է ցուցաբերել Հ.Հ. գյուղնախարարության «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ` համայնքի 232հա վարելահողերի ագրոքիմիական դաշտային ու լաբարատոր հետազոտություններ կատարելու ուղղությամբ, որի արդյունքում համայնքին կտրամադրվի ագրոքիմիական քարտեզը և մշակաբույսերի ընտրության, մշակման և պարարտացման սխեման :

7. Առևտրի և սպասարկման բնագավառում`

Առևտրի օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն և սահմանվել է յուրաքանչյուր եռամսյակի համար տասը հազար դրամ տեղական տուրք և հաստատվել է ավագանու կողմից : 2012թ տեղական տուրքը գանձվել են 100%-ով :

8. Տրանսպորտի բնագավառում`

Հաճախակի կազմակերպվում են համայնքի փողոցների բարեկարգման աշխատանքներ , քանդված հատվածները , փոսերը լցվում են հողով և ավազով , կատարվում է փողոցների հարթեցում :Գյուղի կենտրոնական փողոցը, որն ունի միջհամայնքային նշանակություն` ասֆալտապատվել է

Հազարամյակների մարտահրավեր ծրագրի միջոցներով: 2012թ գյուղի կենտրոնական փողոցի վրա տեղադրվել են գիշերային լուսավորության լապտերներ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին: 2011 թ-ի ապրիլի 15-ի համայնքի ավագանու N 08 որոշմամբ համայնքի բյուջեից 850.0 հազար դրամ գումար է հատկացվել հարավ-կովկասյան երկաթուղու 1250 կմ-ի 8 ՊԿ հատվածում երկաթգծանցի կառուցման համար և այդ աշխատանքները այժմ ընթացքի մեջ են :

9. Կրթության և մշակույթի բնագավառում`

Աջակցում ենք հանրակրթական դպրոցի գործունեությանը : Դպրոցում սովորում են 145 աշակերտներ , ապահովված է բարձրակարգ մասնագետներով: Այժմ դպրոցը մասնակի վերանորոգման ընթացքում է և այնտեղ ընթացող աշխատանքները համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության և հսկողության տակ են :

Դպրոցում գործում են գեղարվեստական ինքնագործ խմբակներ, որոնց գործունեությանը աջակցում է համայնքի ղեկավարը և այլ բարերարներ : Գործում է գրադարանը , որտեղ կա շուրջ 7000 կտոր բազմաբովանդակ գրականություն և որը պարբերաբար համալրվում է:

Մեծ աշխատանքներ են տարվում երիտասարդների դերի բարձրացման ուղղությամբ :

10. Առողջապահության և սպորտի բնագավառում`

Աջակցում ենք համայնքի բուժկետին , սանիտարահիգիենիկ , հակահամաճարակային միջոցառումների կատարման գործընթացին ,

որոնք ընթանում են պլանավորված ժամանակահատվածում և անթերի կերպով :

Համայնքի հանրակրթական դպրոցում կա անհրաժեշտ պարագաներով հագեցած սպորտդահլիճ , որտեղ ցանկացողները զբաղվում են սպորտով :

11. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացվել են `

Շուրջ 16 ընտանիքներ ներգրավվել են « Ընտանեկան նպաստ » ծրագրում : Աջակցում ենք երիտասարդ մասնագետների աշխատանքի ընդունմանը:

12. Գյուղատնտեսության բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները `

Գարնանը ներհամայնքային ոռոգման ցանցի ջրատարները մաքրվել են բուսական մնացորդներից և տիղմից , կատարվել են վերանորոգման աշխատանքներ : Կազմակերպվել են հանդիպումներ բնակչության հետ , որի ընթացքում արծարծվել են ցանքի հետ կապված հարցեր , մշակաբույսերի տարածված հիվանդությունների և ժամանակակից բուժման նոր մեթոդների լուսաբանման հետ կապված հարցերը : Ուշադրության տակ է եղել գարնանացանի և աշնանացանի ընթացքը : Շատերին տրվել են խորհուրդներ և ցուցումներ :

Մարզպետարանի միջնորդությամբ ձեռք ենք բերել 25 տ. ազոտական պարարտանյութ և մեկ պարկը 6000 դրամ արժողությամբ բաշխել նախապես ցուցակագրված հողատերերին:

Կատարվել են գյուղ. կենդանիների հաշվառում. համայնքում առկա են `

խոշոր եղջ. կենդանիներ - 396 գլ.

որից`

կովեր - 155 գլ.

խոզեր - 31 գլ.

ոչխարներ - 190 գլ.

թռչուններ - 682 գլ.

Պարբերաբար հսկվում է համայնքի անասնաբույժի աշխատանքը , որպեսզի գյուղ. կենդանիների բուժ. պրոֆիլատիկ և հակահամաճարակային միջոցառումները կատարվել են ժամանակին և անթերի կերպով :

Համայնքում առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ :

Գյուղը գազաֆիկացված չէ : Մշակույթի տունը և մանկապարտեզը վթարային վիճակում են, որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք : Չկա գյուղապետարանի շենք և փոստատուն : Համայնքի փողոցները ունեն վերականգման և ասվալտապատման կարիք :

Վարելահողերի շուրջ 40%-ը չի մշակվում ոռոգման ջրի սակավ լինելու պատճառով , բնակիչները անընդհատ բողոքում են , որ ջրի պատճառով չեն կարողանում մշակել իրենց հողերը , որն էլ դժվարացնում է նրանց հարկային պարտավորությունների կատարումը :

Մթերքների իրացումը չի կազմակերպվում:

Համայնքի ղեկավար



Վ. Հովհաննիսյան